



Լեկեղեցւոյ:—Պատասխանի. Լպիսկոպոսն եղիցի անարատ, պարկեշտ, ուսուցող. մի երկբան, մի՛ արծաթասէր, մի՛ կերող և արբեցող. մի՛ զօշաքաղ, մի՛ հարկանող, մի՛ կաշառառու, մի՛ բամբասող, մի՛ հակառկող: Եւ հիւ և հանդարտ. պահող, աքնող. ասեցող զհանգիստ քնոյ. լինել սիրող արտասուաց քան ծաղու. օրինակ լինել հօտին ամենայն կարգօք. առնել արժանաւոր ձեռնադրութիւն այնոցիկ որ հասու զիտակ են զրոյ կարգաց և օրինաց Աստուծոյ. և զտգէտս խոտեալ մի՛ ձեռնադրեսցէ. քանզի անգիտութիւն Աստուծոյ ատելի է, որպէս չարագործութիւն. յայսմանէ զգոյշ լիցի քան յամենայն իրաց. քանզի ազէտ քահանայ և սարկաւազունք կամ ո՞ր և իցէ յառաքելական աստիճանն՝ զԱստուած ի բարկութիւն շարժէ. զի թէ բերանովն ի միտ տունու և առնէ, և սրտին ոչ իմանայ, վնասակար լինի ամենայնի Լպիսկոպոսն: Արդ քանզի կորուստ է այս ամենայն հոգւոյն, փախիցէ յայսմանէ. զուսումնասէրն յառաջացուցէ ամենայն պատուով. իսկ զազէտն ամենեւին մի՛ կացուցանել առաջնորդ և վերակացու շնորհի ինչ եկեղեցւոյ. իսկ եթէ յանդգնեալ Լպիսկոպոսին և արասցէ զայս կամ վասն կաշառոյ կամ վասն մերձաւորութեան կամ վասն բարեկամութեան, այնպիսի եպիսկոպոսն նորովեալ եղիցի. և որ ինչ անոյի վնասք ծնանին, ընկալցի վրէժս յաւուրն դատաստանի յանանց տանջանան:

Է. — Ո՞րպէս արժան է Լպիսկոպոսին դնել զիւրան կամ զօտարն:

Պարտ է Լպիսկոպոսին զամենայն հաւատացեալս միապէս սիրել, և զիւր մեր-

ձաւորսն մի՛ աւելի սիրել քան զայլ հաւատացեալս, թէպէտ եղբայր է կամ քոյր: Եւ կաշառ ամենեւին մի՛ առցէ. զինքն մեռեալ համարել յաշեարհի. մի՛ երբէք զբօսնուլ, կամ հրապարակաւ զոք յանդիմանել առանց երկրորդ հարցմանց, նախ առանձին, և երկրորդ կամ երրորդ վկայիւք. հրեշտակական հանգերձիւք վարել. մի՛ պճնող. առանց ընկերաց հարցմանց մի՛ ինչ դործել, զի այն է հաճոյ Աստուծոյ. կացուցանել ընդ ձեռամբ իւրով տեսուչս դաւառաց, քաղաքաց վարդապետս. հովուել զհօա Տեառն. և ժողովրդոցն հնազանդ լինել հովուացն կարգեցելոյ Լպիսկոպոսէն. կարգեսցէ ի շէնքս երկու կամ երեք քահանայ, սարկաւազ մի. իսկ յազարակսն քահանայ մի, և սարկաւազ մի. զհաշմեալ ոք մի՛ ձեռնադրեսցէ. զի եթէ արատաւորն պատարագ չհրամայէ մատուցանել մարգարէն, ո՞րչափ ևս առաւել զերկնաւոր պատարագըն մատուցանել առանց արատոյ լինել. առանց վկայից և քննութեան մի՛ զոք ձեռնադրել և առանց հաւանութեան ժողովրդեանն, զի անախ մահաբեր վնասք ծնանին:

Զ. — Ո՞րպիսի չափով պարտ է ձեռնադրել քահանայս և սարկաւազունս, և ո՞րչափ կալ ի կարդին:

Արժան է Լպիսկոպոսին կարգել քահանայս երեսնամէ, և Լ. ամ կալ ի կարդին. իսկ Օ. ամենեցիցն կամ թէ աւելի մի՛ ձեռնադրել քահանայ կամ սարկաւազ. և մի՛ ամուսնութիւն հրամայել. զի յայսմ վայրի և անձն աղճատին և միտքն. և ժամանակ զինքն պատրաստել իւրում ուղեւորութեան, պայծառացուցանել ըզ-

լապտերան, զի մի՛ զայլս հոգալով, զինքն  
անհոգս արասցէ ի յաւիտենական կե-  
նացն:

Դ. — Որպիսի օրինակաւ պարտ է ընտ-  
րել զլաւսն յոռեացն, և ձեռնադրել:

Եւելի հրաժարեսցի Լապիսկոպոսն ի  
ձեռնադրութենէ, տղիտաց և ակամարացն,  
ցոպածաց և վատաստաց, յափշտակո-  
ղաց և ի շնացողաց և յայլ վաթարադոր-  
ծաց. զայսպիսիսն ամենեւին մի՛ ձեռնա-  
դրել և մի՛ բարկացուցանել զՄատուած:

Ե. — Օխնչ օրինակաւ պարտ է ուղղել  
զսուրբ սեղանն և ճրպէս սպասաւորել:

Արժան է առնուլ ի քարանց օրինակ  
խաչի. և զնա ծածկեացն սուրբ հանդեր-  
ձիւք. և ընդ առաւօտս և ընդ երեկոյս և  
ի ժամ Պատարագին անխնայ լիցի խնկար-  
կութիւն և լուցումն ի ժամու իւրեանց:

Ղ. — Օհաց և զգինի ճրպէս պատշա-  
ձեցուք առ սուրբ սեղանն:

Օհաց Պատարագին յորում աւուր  
զպատարագն մատուցանեն՝ ի նմին աւուր  
եփեսցին խաչապէս դրոշմամբ. նոյնպէս և  
զգինի սուրբ բաժակին՝ ի սուրբ աման  
պահեսցն և սուրբ ամանաւ հանցն ի  
սեղանն. և մի՛ որ յանդգնեցի ջուր խառ-  
նել ի բաժակն, զի չէ ոյն Մատուծոյ հա-  
ծոյ, այլ անագորոյն մտաց . . . :

Ե. — Որպէս պարտ է օրհնել զկեղեցին  
և զսուրբ սեղանն:

Յորժամ զսեղանն հաստատեսցէ Լա-  
պիսկոպոսն, ժողով արասցէ աթոռակցաց  
իւրոց, քահանայից և սարկաւաղաց և  
ժողովրդոց, մատուցանել աղօթս տըք-  
նութեամբ, արտասուօք, սաղմոսիւք, մար-  
գարէիւք և սուրբ Եւտարանաւն, և ա-  
պս մատուցանել պատարագ:

Ը. — Թէ՛ ճրպէս պարտ է յաւուր շնոր-  
հի մխիթարութիւն առնել ժողովրդեան  
կերակրովք և ըմպելիօք:

Յորժամ հաստատէ Լապիսկոպոսն զսե-  
ղանն, արժան է զնմուռն առնել, զուա-  
րակս և արջառս և ոչխարս, որպէս Սողո-  
մոն արար ի շինուածս տաճարին:

Թ. — Որպէս արժան է ժողովրդակա-  
նացն կալ յաղօթս յեկեղեցւոջ:

Յորժամ ժողովին ժողովուրդք հա-  
ւատացեալք ի տուն Մատուծոյ՝ մի՛ քրթ-  
մընջեսցեն, և մի՛ ընդ միմեանս նայեսցին.  
զայլ ինչ մի՛ խօսեսցին, բայց միայն յա-  
ղօթս Մատուծոյ. կացցեն ընդ արեւելս,  
ձեռս ի վեր ամբարձեալս, խնդրելով զար-  
դարութիւն և Լըքայութեանն արժանա-  
նալ, զոր պատրաստեաց Մատուած:

Ժ. — Եթէ որ տգիտութեամբ ձեռնադ-  
րեցաւ քահանայ, և յետոյ յայտնեցի,  
զի՛նչ արժան է առնել:

Եթէ՛ ձեռնադրեսցի որ Լապիսկոպոս  
կամ քահանայ կամ սարկաւաղ, և յան-  
ցանք լինի առնն, շնութիւն կամ գողու-  
թիւն կամ այլ ինչ աղտեղութիւն, և ի  
ձեռնադրութիւնն չգիտաց որ, և վկայեաց  
ոչ որ, և ապա յետոյ ինքն զղջացաւ, և  
կամ պատճառանօք ինչ իրքն յայտնե-  
ցան, ոչ կարէ նա այլ ևս սպասաւորու-  
թիւն առնել սեղանոյն, կամ պատարագ  
մատուցանել. այլ արտաքոյ եկեղեցւոյն  
ապաշխարեսցէ զյանցանա իւր ԺԻ՛ւամ.  
և ապա որ ինչ պարտ է շնորհել նմա ի  
ներքոյ բեմին սպասաւորութիւն առնել՝  
կալ ի պատուին միաբնակեալ մինչև ցօր  
մահուան իւրոյ:

Ժա. — Եթէ ձեռնադրեցաւ որ և յե-  
տոյ դարձեցաւ, զի՛նչ արժան է առնել:

Եթէ ուղիղ էր մարդն և ապա յետոյ շնացաւ կամ զողացաւ կամ վատթար զործեաց, այնպիսեացն ամենևին բարձցի քահանայութիւնն և շնորհն և ձեն և նշանն, զի անհնարին է նմա այլ քահանայանալ. այլ արտաքոյ եկեղեցւոյ ապաշխարեսցէ Ժ. Եւ ամ, ապա եկեղեցւոյ արժանանայ և հաղորդութեան Սուրբ Խորհրդոյն. ընդ զինուորսն կացցէ յեկեղեցւոջն, զի անհնար է նմա ի բեմ ելանել, կամ կարգաւ կամ սաղմոսել մինչև յօրմահուան իւրոյ. քանզի պղծեաց զսուրբ ձեռնադրութիւնն և առ ռոն կոխեաց. մի՛ ոք համարձակեսցի նմա. զի չէ հնար նմա այլ քահանայանալ. իսկ եթէ յանդգնեացի եպիսկոպոսն վասն կաշառոյ կամ վասն բարեխօսութեան և հրաման տացէ նմա քահանայութեան, կրեսցէ նա վրէժ յաւուրն դատաստանի յաններելի տանջանքն:

ԺԵ. — Եմուսնացեալ քահանայ որպէս պատրաստեսցի պատարագ մատուցանել:

Երկու աւուրս հրաժարեսցի ի կնոջն և ապա պատարագ մատուցէ. զի թէ զհաց Յառաջաւորութեանն չեա քահանայն առանց քննութեան և սուրբ գտանելոյ ի կանանց, որչափ ևս առաւել որ զերկնաւոր պատարագն մատուցանէ՝ պարտ է սուրբ լինել և պատրաստ՝ որպէս Եստուծոյ իսկ կալ ի սպասու ահիւ և զողութեամբ, զի պսակաց արժանի լիցի և անմահ կենացն:

ԺԶ. — Ենձամբ քահանայ որպէս արացէ:

Եթէ կուսան քահանայ ոք լիցի, այնպիսին տքնող լիցի՝ յորում աւուր զարատարագն մատուցանել կամիցի, պատրաստ

տեսցի զգիշերն ամենայն սուրբ խորհրդով, կատարեալ մտօք առանց կեղծաւորութեան. քանզի ընդ Եստուծոյ ի խորհուրդ մտանէ:

ԺԷ. — Եթէ արժան է քահանային երզնու:

Նմա չէ արժան կալ ի քահանայութեանն, զի զբանն Եստուծոյ անարդեաց:

ԺԸ. — Որպէս պարտ է քահանային լինել:

Արժան է աղքատասէր լինել. քաղցրորան, խորհրդական. զմեղուցեալսն ուղղել յապաշխարութիւն, պահօք և աղօթիւք զամենեւեան Երբայութեան արժանացուցանել. զի յերեւելն Քրիստոսի առնուցու զանթառամ փստաց պսակն:

ԺԹ. — Որ հաւատացեալ է և մկրտեալ, և անկանիցի ի մեղս, զի՞նչ արժան է առնել:

Մի երբեք լիցի նոցա անկանել ընդ մեղօք. այլ աստուածահաճոյ վարել ըզկեանս իւրեանց. մի՛ շնալ, մի՛ զողանալ, մի՛ բամբասել և մի՛ երգնուլ, այլ որպէս Եստուծոյ իսկ ժողովուրդ՝ առանց ազտոյ լինել:

ԺԿ. — Որ շնայ, զի՞նչ պարտ է առնել:

Արտաքոյ եկեղեցւոյ ապաշխարեսցէ Գ. ամ պահօք և աղօթիւք, տքնութեամբ և լուծումն ի շաբաթ և ի կիւրակի և ի Տէրունական տօնս մինչև ի կատարիլ երից ամացն. և յամին չորրորդի հաղորդութեան արժանի լիցի. . . :

ԺԶ. — Որ ի շնան զորդեծնութիւնն հեղուցու, զի մի մարդկան յայանեսցի, և զԵստուծոյ երկիւղն առ ոչ ինչ համարեսցի:

Եյնպիսին ընդ սպանողի ապաշխարեսցէ բազում հառաչանօք:

ԺԴ. — Որ հեղու զինքն, զի՛նչ առնելի է:  
Պիղծ է այնպիսին, ընդ շնացողս ապաշխարեսցէ, և եթէ յամէ, կրկին ապաշխարեսցէ, և ձեռնադրութեան արժանի մի լիցի:

Է. — Որ ընդ արու պղծի, զի՛նչ արժան է առնել:

Չամենայն աւուրս կենաց իւրոց ապաշխարեսցէ արտաքոյ եկեղեցւոյն, և ի ժամանակ որոշման իւրոյ հաղորդեսցի:

Խ. — Եթէ ամուսնացեալք շնան, զի՛նչ արասցուք:

Տասներկու ամ արտաքոյ եկեղեցւոյն ապաշխարեսցէ արտասուօք. վեց ամ օրէնս մի առցէ. և զտարւոյն երեք մասն պահեսցէ, և մի մասն կերիցէ, և զշաբաթ և զկիրակի և զՏէրունական տօնսն կերիցէ, և մտցէ յեկեղեցի և օրէնս առցէ:

ԷԶ. — Որ զՔրիստոս ուրանայ և զըզջացեալ դառնայ, զի՛նչ արասցուք:

Չամենայն աւուրս կենաց իւրոց ապաշխարեսցէ արտասուօք, պահօք և աղօթիւք և տրօք անանկաց, ի վախճանին հաղորդեսցի:

ԷԸ. — Որ կամօք մարդ սպանանէ, որո՞ւմ արժան է:

Տասն և հինգ ամ ընդ ունկնդիրս կացցէ. մի ամ ընդ ձեռամբ. և յելս անձին իւրոյ հաղորդեսցի:

ԷԹ. — Որ մի մօր կաթամբ սնեալ են օտարք ի միմեանց, արժան է ամուսնանալ:

Չէ արժան, զի ծնող և սնուցող ի մի համարի են:

ԷԵ. — Եթէ ազգականք ամուսնանան, զի՛նչ արասցուք:

Վակիւ արժան է ի միմեանց, և ծանր ապաշխարութիւն ի վերայ դնել. զի չէ

ամուսնութիւն, և ընդ անիծիւք Երարչին է:

ԷԶ. — Որ զսահման ընկերին յափշտակէ, որպիսի ինչ:

Չոր զրեաց Մովսէս յօրէնան, իջցէ անէծքն ի վերայ նորա և եղիցի նորովալ ի կեանս և ի մահ:

ԷԷ. — Որպէս կատարեսցուք զԵստուածային տօնից զկարգս:

Վախ պահեսցին շաբաթ մի ի պատիւ տօնին, և ապա կատարեսցին:

ԷԸ. — Չորեքշաբաթ և զուրբաթ արժան է պահել:

Երժան է պահել և աղօթել, զի աւուրք չարչարանաց Փրկչին մերոյ են. Խորտում կալ. յիշել գնորա կամաւոր խոնարհութիւն, զոհանալով զնմանէ, որ եկն և փրկեաց զմեզ իւրով կամաւոր չարչարանօքն մինչև ցինն ժամս:

ԷԹ. — Չսուրբ Վառաստեւանն արժան է պահել:

Չսուրբ քառասներորդան պահեսցին ամենայն քրիստոնեայք սրբութեամբ որոշ ի շաբաթէ և ի կիրակիէ, յորժամ Տեառն մերոյ չարչարանաց աւուրք դան, ժպրհել մի՛ որ իշխեսցէ յայն աւուրս. այլ տրտում ըստ Տեառն մերոյ՝ տքնութեամբ անդադար աղօթեսցին, և ապա զկենարար պասէքն արասցեն. ցնծացեն ընդ Տեառն մերոյ յառնին. աղօթիւք փառաւորեսցին զնա որ փրկեաց զմեզ յարութեամբն իւրով, և ետ մեզ երգակից լինել վերնոցն, զինմա վայելէ փառք յաւիտեանս. ամէն:

“ Իբրեւ կատարեաց զայս սուրբ Ընաքեալն Թադդէոս, ասէ ցԺողովուրդն. հարք և եղբարք որք Տեառն ետուք զանձինս,

այս ձեղ յինէն օրէնք, և այլ՝ որ յետ ձեր լինելոց են: Արդ հաստատուն կացեք յամենայնի զոր լուարուք յինէն. մի՛ անցանէք ըստ սահմանս ըստ այսմ, զի ձեզ բարի լինիցի և երկայնակեացք լինիցիք. եղիցի ձեզ յիշատակ բանս այս, և մի՛ մոռանայք յաղօթս ձեր. և զայլ կարգաւորութիւնն ուսուցէ ձեզ Ազգէ, զամենայն զոր լուաւ յինէն ըստ կարգին զոր կարգեցին եղբարք և առաքեալք Տեառն. պահեալք խաղաղութեամբ ի փորձանաց չարին. խաղաղութիւն ընդ ձեզ, , :

“Օայս Օրինագրութիւնն եւ Օաքարիս աշակերտ առաքելոյն թաղ դէօսի գրեցի, որպէս լուայ ի նմանէ, ամենայն հաստատեցելոց ի Վրիստոս, , :

ԳԼՈՒԽ Բ.

Եւ զիս խնդրէ ի Աղարշապատ լուսն ընդ զայն զիս լուսն և զիս լուսն:

(Լմք Տեառն 325). — Եյն ինչ առաջին Ընդհանրական Ժողովն Արիկոյ լնէր ի Վիթմանիս քաղաքի հրամանաւ ինքնակալին Առաքանդիանոսի՝ ընդ դէմ Երիսի Աղեքսանդրացոյ, որ ուսուցանէր “ոչ գոլ զԱրդի հաստատ շօր, և ոչ ի բրնոթենէ և յէութենէ շօր, և ոչ ծնեալ ի շօրէ յառաջ քան զյաւիտեանս, այլ օտար զոմն և արարած և կրտսեր և յետ ժամանակի զոյացեալ, , և զայր հասանէր հրովարտակ ինքնակալին առ Տրդատ արքայ գնալ ի Ժողովն հանդերձ Ս. Վրիգորիւ. սոցա ոչ կամելով գնալ, առաքին թղթով ի տեղի իւրեանց զոգրբրն Արիստակէս:

Եւ զիս յորժամ դարձաւ Երիստակէս հանդերձ քսան կանոնիք և դաւանու-

թեամբ սրբոյ Ժողովոյն, որ վասն բարեկորգութեան եկեղեցւոյ ըստ օրպիսութեան այնր ժամանակի, սուրբն Վրիգոր Ժողով արարեալ ի Աղարշապատ քաղաքի յԱթոռն Հայրապետական, ընկալաւ վիանոնս և զգաւանութիւն ժողովոյն, զհանգանակն հաւատոյ, կնքելով զայն բանիւս “Իսկ մէք փառաւորեացոյք որ յառաջ քան զյաւիտեանս երկրպագանելով սրբոյ Արրորդութեանն և միոյ Աստուածութեանն շօր և Արդւոյ և շօրւոյն սրբոյ, , :

Եւ զիս լուսն վկայութեան Խորենացոյն Բ. Վիրք, Վ. “Սուղ ինչ գրուսն յինքնէ ի կանոնս Ժողովոյն յաւելու, վասն առաւել զգուշութեան իւրոյ վիճակին, , :

Սուրբն Վրիգոր, զորս յառաջ բերեմք աստանօր:

Վերնագիր կանոնաց սրբոյն Վրիգորի երկրորդ լուսաւորչին մերոյ եղեալ ի Առնոնագիրս մեր ըստ այսմ, “Սոնոն սրբոյն Վրիգորի Պարթեւի՝ յաւելումն Արիկա-կանին, , մէք առաւել հաւատարիմ համարեմք և զհեռեալ զերեսուն զլիսովք կանոնս նմա լնել, քան զկործիս Սիքայէլի Չամէհան \*), զորս և յառաջ բերեմք ի Առնոնագրոց՝ ըստ այսմ:

\*) 2 հայեցեալ մեր ի կարծիս Հ. Միքայէլի Չամէհան յառաջ բերեալս յԱ. հատ. զԼ. Խ. որով զեղեալ կանոնս երեսուն զլիսովք անուամբ սրբոյն Վրիգորի Պարթեւի՝ ոչ հայեցուցանէ ի հանգամանս ժամանակի սրբոյն, մէք հաւատարիմ համարելով զԱռնոնագիրս մեր ի նախնաց առ մեզ հասեալս, և զվերնագիր կանոնացն, և զարդախս աստանօր ըստ կարգի պատմութեան Ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ. և ոչ իսկ կամեմք մտանել ի տարապարտ քննութիւնս նո-

ա. — Վահանայ որ ի մեղս զառաժեալ է, տասն ամ ապաշխարեսցէ ջերմեանդն արտասուօք և արովք անանկաց. և ապա հաղորդեսցի օրինաց:

բ. — Վահանայ որ կին առնու, հինգ ամ արտաքոյ, և երկու ամ ի ներքս ապաշխարեսցէ, և երկու ամ անհաղորդ կացցէ, ապա հաղորդեսցի:

գ. — Վահանայ որ զարծաթ իւր ի վարձու տայ, մերժեսցի յեկեղեցոյն:

դ. — Որք երթան ի տունս հեթանոսաց և ուտեն և ըմպեն անխտիր, երեք ամ ապաշխարեսցեն, և ապա հաղորդեսցին:

ե. — Որ մինն երկեակ է և միւսն կուտան, երկու ամ արտաքոյ, և մի ամ ընդ օրինօք:

զ. — Եթէ որ թողու զերկրորդն և յառաջինն դարձցի ի թողեալն, եօթն ամ ընդ յանցանացն ապաշխարեսցէ, և երկու ընդ օրինօք:

է. — Որք որ կերիցէ դաղա, և արգելցէ զուտեն, և տացէ ազքատաց զնոյն չափ:

ը. — Եթէ որ դաղա պսակ դնէ, պսակազիրն լուծցի:

թ. — Եթէ որ առեանդ արացէ, պսակն այն յաւեր կզիցի, և պսակեալն ում կամ լիցի:

րա վասն այսր կանոնայ ի նոյն Ա. հատ. եր. 647-649, մինչդեռ այս կանոնք սրբոյ Պարթեւին զիցուք թէ ըստ նորա ոչ հայնեայնքան ի հանգամանս ժամանակի նորա, որով կամի ասել թէ նորոգ պայծառանային Եկեղեցիք Հայաստանայց և վիճակ ժողովրդոց քրիստոնէութեամբ և աստուածաբաշտութեամբ ի բարեկարգութիւնս. բայց աւանիկ համաձայն դան այնոքիկ նիկիական ընտացեալ առաջնոց կանոնացն զրեթէ ըստ իւրաքանչիւր զխոց. զորս բաղդատեալ թողուք քննարանից:

ժ. — Որ ի ձիան յերասանին, յաղերայէս, երեք ամ արտաքոյ, և մի ամ ընդ օրինօք:

ժա. — Իգագելոյն երեք ամ արտաքոյ, և երկու ամ ընդ օրինօք:

ժբ. — Թովչացն հինգ ամ արտաքոյ, և մի ամ ընդ օրինօք մեծաւ ոգորմութեամբ հաղորդի:

ժգ. — Որ կուտութիւն Բստուծոյ խոտացաւ և ապա պոռնկեցաւ, եօթն ամ ապաշխարեսցէ:

ժդ. — Մանուկ որ առանց կնքոյ մեռանի, եթէ ի ծնողացն ծուլութենէ իցէ, եօթն ամ արտաքոյ ապաշխարեսցեն, և մի ամ ընդ օրինօք. նոյնպէս և հոգաբարձուացն և քահանային, որ ծուլացաւ:

ժե. — Որ զզերեղմանս առանձուկ, երեք ամ արտաքոյ ապաշխարեսցեն, և մի ամ ընդ օրինօք:

ժզ. — Որ զղիւն կողոպտեն, տասն և հինգ ամ արտաքոյ ապաշխարեսցեն, և մի ամ ընդ օրինօք:

ժէ. — Որ կոծ դնեն և զհերան խցեն, և զճակատս հարկանեն, նզովեալ լիցին ի կեանս և ի մահ:

ժը. — Չէ պարտ ուր նշխարք մարմիրոսաց դնին, պատարագ մատուցանել ի վերայ:

ժր. — Չէ պարտ քրիստոնէից նկատել զեսառնակումն անասնոց. և առաւել ևս կանանց պատուիրեն օրէնք, և որ գացի նզովեալ կզիցի:

ի. — Առ հրամայեն կանոնք Բնապատականաց մկրտութիւն առնել, կամ օրէնս տալ ժողովրդոց, կամ պսակ դնել, զի այս Բաղնորդաց է:

իա. — Եթէ որ ելոյձ հրամանս մեռելոյն և արհամարհեաց նզովեալ կզիցի:

էք. — Եթէ որ ի քահանայից զծածուկ խոստովանութիւն ուրուք յայտնեցէ, անկցի յատիճանէն, և ի կարգէ պաշտօնէից մերժեցի. և մեղք չխոստովանողացն եկեցէ ի վերայ նորա:

էք. — Որ վասն պոռնկութեան արձակէ զկին իւր՝ արձակեալ լիցի. բայց մի ամ սրբեցի:

էք. — Եր որ զկին իւր թողու ի պատճառս Լստուած պաշտութեան՝ նշովեալ եղիցի:

էք. — Եթէ որ արբեցաւ ի քահանայից, կամ ի սարկաւազաց կամ ի դպրաց, մի իշխեսցէ ի պատարագն կամ ի պաշտօնն մերձեալ, մինչև բազում արտասուօք և զթով անանկաց ապաշխարեցէ. զի արբեցողքն ընդ սպանողս են:

էք. — Եթէ որ ի քահանայից կամ յաշխարհականաց առցէ կաշառս, եկեսցեն անէծքն Սիմոնի կախարդի ի վերայ նորա, և կցորդ եղիցի Յուդայի մատնչի կաշառոյն, և Վէեզի բորոտի. այրեցին ոգիք կաշառառուացն:

էք. — Չեղնածուացն մի ամ արտաքոյ օրինացն, և մի ընդ օրինօք ապաշխարեցեն. արտասուօք և ողորմութեամբ քաւեցին:

էք. — Պարտ է քրիստոնէից պատուել զկիւրակէն և հանգչիլ ի նմա. ապա եթէ որ պահեսցէ հրէաբար, նշովեալ եղիցի:

էք. — Քահանայ որ վայրաբար նշովէ նշովեալ լիցի:

էք. — Այս որ նուիրեսցէ զինքն Տեառն Լստուծոյ, նոյնպէս և մոնողոն՝ մի իշխեսցէ ամուսնանալ. ապա եթէ գտցին անկեալք, մերժեցին ի հաղորդութենէն.

և Եպիսկոպոսն տեսցէ զվարսն, և որպէս կամի՝ մարդասիրեսցէ:

Եյս կանոնք սրբոյն Գրիգորի Պարթևի ունի վերջաբանութիւն այսպիսի ի Կանոնագիրս մեր, յորմէ առաք զվերոյ գրեալ կանոնսն:

«Եւ արդ զայս ամենայն զրեցաք առ ի փորձելոյ զեւթաքանչիւր. չափ ապաշխարութեան. զի մի՛ զոք կորուսցուք յայնպիսեաց անտի, այլ զարհուրեալք ի ծանր դատասանէն, և յահագին և ի մեծ հատուցման աւուրն Տեառն մերոյ ընկալցուք զայնպիսիսն և օգտեսցուք զնոսա հանդերձ աղօթիւք և պատարագօք, և յափշտակեսցուք զնոսա յորոգայթից սատանայի, որպէս զի և զանձինս մեր կարացուք զերծուցանել յահագին տանջանացն Վրիստոսիւ Յիսուսիւ Տերամբ մերով. փառք յաւիտեանս. ամէն, , , :

Յհետ վերոյեղեալ կանոնացն դնին դարձեալ ի նմին Կանոնագրի և հետագայ կանոնքդ մեծասան զլեովք՝ անուամբ Սրբոյն Գրիգորի Պարթևի՝ այսպիսի վերնագրով:

«ԿԱՆՈՆՔ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՊԱՐԹԵՒԻ».

Վարչեալ հարցոմն և պատասխանէն նոյս:

ա. — Քահանայ որ ընդ կնոջ ի քուէն է, ի վաղիւն պատարագ մի իշխեսցէ մատուցանել: Եւ աշխարհական որ ընդ կնոջ ի քուէն է, ի վաղիւն օրինաց մի լիցի հաղորդ:

բ. — Զարգ. — Ո՛չ է հայր մահա:

Պատասխանի. — Կախանձ:

— Ուտի՞ յայտ է:

Յայտմանէ. Կախանձու բանտարկունին  
եմուտ մահ յաշխարհ:

Գ. Հարց. — Եւ ո՞վ մայր մեղաց:

Պատասխանի. — Եգահուծիւն, որպէս  
ասին՝ Երմատ ամենայն չարեաց արծաթ-  
սիրութիւնն է:

Դ. Հ. — Ո՞վ է որ տանի ի կեանսն յաւի-  
տենից:

Պատասխանի. — Հեղութիւն . . .

Ե. Հ. — Եւ ո՞վ առիթ դժոխոցն:

Պատասխանի. — Լըբութիւն . . .

Ղ. Հ. — Եթէ կարիցե՞ն կախարդք զը-  
նութիւն արարածոց փոխել:

Պատասխանի. — Եթէ հաստատել կա-  
րեն, ապա և փոխել կարեն . . .

Է. Հ. — Կայեն առանց Եստուծոյ սպան  
զԵբէլ, և սպանողն Կայենի՝ առանց Ես-  
տուծոյ սպան զնա ևլն . . .

Պատ. — Օհ թէ լինի մարդ առանց Ես-  
տուծոյ և մեռանի, ոչ պոռնկորդին Ես-  
տուծոյ հրամանաւն լինի, և ոչ մեղաւորն  
Եստուծոյ հրամանաւն մեռուցանէ զար-  
դարն, այլ ստատնայ է պատճառ չար-  
եաց . . .

Ը. Հ. — Եթէ կարիցե՞ն կախարդք որ-  
դիս տալ ամոք . . .

Պատ. — Եմլութեան բողոմ պատճառք  
են. այն զոր Եստուած արգելեալ է, չէ՛  
որ որ նմա ձեռնհաս կարէ լինել, ոչ կա-  
խարդք և ոչ բժիշկ . . .

Թ. Հ. — Գիւհահարութեան պատճառ  
ի՞նչ է մարդկան:

Պատ. — Վասն հպարտութեան մարդ-  
կան լինի . . .

Ժ. Հ. — Օնունդք ե՞ն զիւաց, և մահ  
աճե՞ն և պակասե՞ն:

Պատ. — . . .

Ժա. Հ. — Բաջք աներեւոյթ արարածք  
են Եստուծոյ, զպատերազմունս նորա՞  
հարկանեն, զորս էրէց նորա՞ հարկանեն . .

Պատ. — Եյսպիսի յիմարութեամբ լըյ-  
եալ է երկիր . . .

Բայց յերկուց աստի կանոնացս եղերոց ի  
Վանոնազիրս մեր որպէս ասացաք, անուամբ  
Սրբոյն Գրիգորի երկրորդ լուսաւորչին մե-  
րոյ գառք դարձեալ ի նմին և զերկուս  
ճառօրէն կանոնս նորին Գրիգորի, առա-  
ջինն՝ վասն կարգի ուխտի և որոշումն վա-  
նաց, և երկրորդն՝ յազազս նուիրանաց քա-  
հանայից և վանօրէից՝ կոչեցեալն Եգապ,  
Թարգմանեալ յաւուրս սրբոյն և մեծին  
Սահակայ՝ ընդ ձեռն Եղնակայ, որպէս է տե-  
սանել ի վերնագրին, յորոց երեւի առեալ  
սրբոյն Սահակայ, և ընդարձակեալ զկանոնս  
արարեալս նորա յամին 426, ի Չորրորդ  
Ժողովն Վաղարշապատայ: Եյսոքիկ կա-  
նոնք զնոյն համարիմք մէք եղեալս ի սրբոյ  
Գրիգորէ Պարթևէ՝ զորմէ Եգաթանգի զոս  
և Խօրենացին զրին սուղ ինչ զլուսս յին-  
քենէ ի կանոնս Ժողովոյն յաւելու սուրբն  
Գրիգոր՝ վասն առաւել զգուշութեան  
իւրոյ վիճակին, զոր երեւի չունել ի ձեռին  
և հայր Միքայէլ Չամչեան յիւրում ժա-  
մանակի, ապա թէ ոչ յընդունայն ան-  
կանէր ի տարապարտ քննութիւնս որպէս  
ասացաք ի ծանօթութեանն՝ յազազս կա-  
նոնաց սրբոյն Գրիգորի Պարթևի:

(Երբեքնէն)

ԱՐԷԼ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԻԹԱՐԻԱՆՑ.